

## Պատասխաններ

### X-դասարան

1. Վիպերգը առասպելական պատմություններով, բայց պատմական հիմք ունեցող ասք է , որը ներկայացնում է հայ ժողովրդին, նրա պետականության կազմավորումը, հաղթական և ազատագրական պայքարը:

Վիպերգը ձևավորվել է հնագույն ժամանակներում և կազմում է բանահյուսության համեմատաբար ուշ շերտը (առասպելից հետո): Վիպերգերի մեծ մասը փրկվել է պատմահայր Մովսես Խորենացու շնորհիվ: «Արա Գեղեցիկ և Շամիրամ» վիպերգը IX դարի պատմական անցքերի արձագանք է: Նա Արամ թագավորի որդին է , միաժամանակ ունի դիցաբանական հիմք. անձնավորել է զարթոնք ապրող բնությունը:

Վարդգես Մուրենյանց «Շամիրամը Արա Գեղեցիկի դիակի մոտ» կտավը:

Վահան Տերյան «Չեմ դավաճանի իմ Նվարդին», Եղիշե Չարենց «Շամիրամ», Նաիրի Չարյան «Արա Գեղեցիկ»:

2. Շամիրամ - «Արա Գեղեցիկ և Շամիրամ»

Սաթենիկ - «Արտաշես և Սաթենիկ»

Տիգրանուհի - «Տիգրան և Աժդահակ»

3. Երկտողը Սայաթ Նովայի մասին է. Հեղինակը Եղիշե Չարենցն է:

Քառատողը նվիրված է Սայաթ Նովայի մեծ սիրուն՝ Աննա Բատոնաշվիլուն:

Փոխաբերություններ՝ լիզուդ՝ շաքար, ակռեքրդ մարքրիտ, ալմաս է, պռոշրդ դանդ: Մեծ Բեզարած, մեծ ըղձավոր, սիրո երգիչ:

1914 թվականին Հովհաննես Թումանյանի և Գևորգ Բաշինջաղյանի ջանքերով կանգնեցվում է մեծ աշուղ-բանաստեղծի մահարձանը և այդ թվականից էլ նշվում է «Վարդատուն»՝ նվիրված Սայաթ Նովային:

4. Հեղինակը Րաֆֆին է (Հակոբ Մելիք-Հակոբյան):

Պատմավեպ են: «Պատմական վեպը մի ժողովրդի պատմական կյանքի նկարագիրն է...», «Պատմությունը մի վարդապետություն է , մի դասարան է , որի մեջ ապագա սերունդը կրթվում է...» :

Շրջասույթ՝ ազատագրական պայքարի երգիչ. ազատագրական պայքարի փողհար: